

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատված է՝
ԱրՊՀ գիտական խորհրդում

Արձանագրություն _____

«_____» _____ 20__թ.

Վավերացնում եմ՝

Ռեկտոր _____

Ա.Ա.Հ.

Ստորագրություն

«_____» _____ 20__թ.

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Մասնագիտություն՝ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 011401.00.6

Կրթական ծրագիր՝ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 011401.19.6

Որակավորում՝ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐ

Ստեփանակերտ 2019

1. Կրթական ծրագրի ընդհանուր բնութագիրը

1. «Հայոց լեզու և գրականություն» (011401.19.6) մասնագիտության կրթական ծրագիրը հաստատված է Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության 2015թ. դեկտեմբերի 18-ի N 277-Մ հրամանով՝ *ԼՂՀ բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների կրթական ծրագրերը հաստատելու մասին*/ Հավելված 1 /Ցանկ ԼՂՀ բարձրագույն մասնագիտական կրթության (բակալավր ու անընդհատ և ինտեգրացված) մասնագիտությունների կրթական ծրագրերի:
2. Որակավորման աստիճանը՝ *Մանկավարժության բակալավր, հայոց լեզվի և գրականության ուսուցիչ՝ 011401.19.6 մասնագիտությամբ*
3. Ուսումնառության տևողությունը՝ *4 տարի / 8 կիսամյակ/*
4. Ուսումնառության ձևը՝ *առկա*
5. Կրեդիտ՝ *240 ԵԿՓՀ (տարեկան 60 ԵԿՓՀ հաշվարկով)*
6. Ընդունելության նվազագույն պահանջ՝ *միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն կամ միջին մասնագիտական կրթություն*
7. Ավարտական աշխատանք՝ *20 կրեդիտ*
8. Փորձուսուցում՝ *10 կրեդիտ*
9. Կրթական ծրագրի պատասխանատու ամբիոններ՝
 1. ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն
 2. գրականության և լրագրության ամբիոն
10. Ծրագրի բնութագիրը:

Հայոց լեզու և գրականություն մասնագիտության բակալավրիատի կրթական ծրագիրը (այսուհետ՝ ՄԿԾ) մշակվել է ԱՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի բակալավրի որակավորման պետական կրթական չափորոշիչի համաձայն և ըստ այդմ՝ ԱրՊՀ առաքելությամբ սահմանված պահանջներին համապատասխան.

հիմքեր՝

1. *Լեոնային Ղարաբաղի Հանրապետության որակավորումների ազգային շրջանակը հաստատելու մասին ԼՂՀ Կառավարության որոշում N 944-Ն, 27 դեկեմբերի, 2012թ.*
2. *ԱրՊՀ Ռազմավարական ծրագիր 2019-2023, ԱրՊՀ խորհրդի՝ 2019թ. մարտի 5-ի, N3 նիստի որոշում*

11.Փորձուսուցման տեսակները և վայրը: Ուսումնառության ընթացքում ուսանողները մասնակցում են ուսումնական-ճանաչողական (2 կրեդիտ), արտադրական (մանկավարժական)-կիրառական (4 կրեդիտ), արտադրական (մանկավարժական)-ամփոփիչ (4 կրեդիտ) փորձուսուցումների: Իրենց փորձուսուցումն անց են կացնում Ստեփանակերտի Խ. Աբովյանի անվան հ. 1 հիմնական, Ա. Ղուլյանի անվան հ. 2 հիմնական, Եղ. Չարենցի անվան հ. 7 հիմնական դպրոցներում:

12.Աշխատանքային հնարավորությունը: Կրթական ծրագրի շրջանավարտները կարող են աշխատել՝
Դպրոցում՝

- Ուսուցիչ
- Մեթոդիստ
- Կազմակերպիչ
- Գեղմասվար
- Ուսմասվար
- Տնօրեն

Հանրային ծառայությունների ոլորտում՝

- Գործավար
- Հասարակայնության հետ կապերի գծով մասնագետ
- Մամուլի քարտուղար
- Ընդհանուր բաժնի մասնագետ, ղեկավար

Հեռուստառադիոյում և թերթերում՝

- Սրբագրիչ
- Խմբագիր

13.Գնահատումը:

Գնահատման առանցքը ուսանողակենտրոն մոտեցումն է:

Ուսանողների գիտելիքների գնահատումն իրականացվում է գնահատման 4 ձևերով՝ ավանդական ստուգարքի, ավանդական քննության, առանց եզրափակիչ գնահատմամբ ստուգման, եզրափակիչ գնահատմամբ քննության միջոցով: Յուրաքանչյուր գնահատման ձևի բաղադրիչները, գնահատման մեթոդաբանությունը հստակորեն սահմանված են¹, գնահատման չափանիշների թափանցիկությունն ապահովված է. առկա է ձևավորող (քայլերով հաշվարկված) և ընդհանրացնող գնահատման հավասարակշռություն: Գիտելիքի և հմտությունների գնահատման համարժեքությունն ապահովվում է դասավանդման և ուսումնառության մեթոդների համապատասխանությամբ, լսարանային աշխատանքի և ինքնուրույն աշխատանքների փոխկապակցված գնահատմամբ:

Կրթական ծրագրի վերջնարդյունքների ձեռքբերման հավաստիությունը ապահովվում է՝ ըստ դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների համապատասխանության (տե՛ս Հավելված 3):

14. Ռեսուրսային ապահովվածությունը: *Ներկայացնել կրթական ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներով (դասախոսական, ուսումնամեթոդական, ենթակառուցվածքային) ապահովվածության վերաբերյալ տվյալներ և հիմնավորումներ:*

Ներկայացված կրթական ծրագիրն իրականացնելու համար ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությունը սպասարկող երկու հիմնական՝ ակ. Սերգեյ Աբրահմյանի անվան հայոց լեզվի և գրականության ու ժուռնալիստիկայի ամբիոններն ունեն գիտամեթոդական անհրաժեշտ որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմ (բանասիրական գիտությունների 2 դոկտոր, լեզվաբանության և գրականագիտության 4 պրոֆեսոր, 20 թեկնածու, այդ թվում՝ 16 դոցենտ), ընդ որում՝ նշյալ կրթական ծրագրի իրականացումն ապահովող ամբիոնների դասախոսական կազմի 62.5 տոկոսն ունի գիտական աստիճան:

Ամբիոններն ունեն տեղեկատվական որակական և քանակական ռեսուրսների բավարար ներուժ, նյութատեխնիկական բազա: Դասախոսական կազմի տվյալների բազան՝ նրանց գիտական աստիճանների, կոչումների և որակավորումների վերաբերյալ, տեղեկատվական ռեսուրսների որակի և քանակի, նյութատեխնիկական բազայի տվյալները ներկայացված են (*Հավելված 4*):

- 1. Կրթության հետագա հնարավորությունները:** Սույն կրթական ծրագրի շրջանավարտներն իրենց կրթության հետագա հնարավորությունները կարող են իրացնել մագիստրոսական ծրագրում, իսկ հետագայում՝ ասպիրանտուրայում՝ ըստ ԱՀ ՈԱՇ-ի համապատասխան մակարդակների:

¹ Տե՛ս «Կրեդիտային համակարգով առկա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ», ԱրՊՀ գիտական խորհրդի 2014թ. հունիսի 19-ի N27-Լ որոշման հավելված, հոդված 6:

2. Մասնագիտության նկարագրի ձևակերպումը

Հայոց լեզու և գրականություն մասնագիտությամբ շրջանավարտը մասնագիտական գիտելիքներով և հմտություններով մրցունակ, համամարդկային արժեքները ճանաչող, ազգայինն առաջնահերթորեն կարևորող արհեստավարժ ուսուցիչն է՝ բանասերի հմտություններով: Նրա գործունեությունն առաջնայնորեն առնչվում է հանրակրթական դպրոցներում *հայոց լեզվի և գրականության* դասավանդման, մայրենիի հանդեպ սիրո և հարգանքի դաստիարակման, ազգային ավանդույթները մայրենի լեզվով ու գրականությամբ ուսուցանելու, պետական լեզուն որպես ազգային արժեք ճանաչել տալու խնդիրներին: Մասնագիտության շրջանավարտը իր գիտելիքները կարող է իրացնել նաև բոլոր այն պետական ու մասնավոր կառույցներում, որտեղ պահանջվում են մայրենի լեզվով գրավոր փաստաթղթային փաթեթների ձևակերպման, բանավոր հաղորդակցման տեխնիկային լիարժեք տիրապետելու կարողություններ, մամուլի և հասարակայնության հետ կապերի գծով աշխատանքներում հմտություններ:

Մասնագիտական գործունեության օբյեկտներ են նախ՝ սովորողների ուսուցմանը, դաստիարակությանը և անձի ձևավորմանն ուղղված մանկավարժական գործընթացները, ապա՝ բանավոր ու գրավոր հաղորդակցման միջոցներով իրականացվող գործողությունները:

Մասնագիտական գործունեության տեսակներն են՝ կրթադաստիարակչական, ուսումնամեթոդական, սոցիալ-մանկավարժական, մշակութային-լուսավորչական, կազմակերպչական:

Ծրագրի ավարտին շրջանավարտին տրվում է *մանկավարժության բակալավրի որակավորում*՝ «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ:

«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ մանկավարժության բակալավրի պատրաստումն ապահովող հիմնական կրթական ծրագրի մշակման համար անհրաժեշտ նորմատիվ փաստաթղթերն են՝

- «Կրթության մասին» ԼՂՀ օրենքը,
- «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ԼՂՀ օրենքը,
- «ԼՂՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին» ԼՂՀ Կառավարության 2008թ. մայիսի 6-ի N 338 որոշումը,
- «ԼՂՀ-ում կրթական ծրագրի իրականացման լիցենզավորման կարգերը, լիցենզիայի ձևերը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Կառավարության 2001թ. մարտի 6-ի N 52 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ Կառավարության 2011թ. հունիսի 21-ի N 410-Ն որոշումը,

- «ԼՂՀ կրթության որակավորումների շնորհման կարգը հաստատելու մասին» ԼՂՀ Կառավարության 2013թ. ապրիլի 25-ի N944-Ն որոշումը,
- Նախկինում շնորհված որակավորումների համապատասխանեցման կարգը հաստատելու մասին» ԼՂՀ Կառավարության 2013թ. սեպտեմբերի 25-ի N 656-Ն որոշումը,
- ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 18-ի N277/Մ հրամանը,
- «ԱՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» ԱՀ Կառավարության 2017թ. դեկտեմբերի 5-ի N235-Ն որոշումը,
- ԱրՊՀ կանոնադրությունը,
- «Կրեդիտային համակարգով առկա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ»/ԱրՊՀ գիտական խորհրդի 2014թ. հունիսի 19-ի N27-Լ որոշումը,
- «Արցախի պետական համալսարան ՊՈԱԿ-ի կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և վերանայման ընթացակարգը հաստատելու մասին» 2014թ. հոկտեմբերի 7-ի N45-Լ որոշումը,
- ԱրՊՀ զարգացման ռազմավարական ծրագիրը (2019-2023թթ.)
- «ԱրՊՀ բակալավրի կրթական կառուցվածքի և բովանդակության ծրագրի կարգը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի 2019 թվականի հունիսի 28-ի N6-Լ որոշումը.
- «Մասնագիտության կրթական ծրագրի» ձևաչափը լրացնելու մեթոդական ցուցումները հաստատելու մասին ԱրՊՀ գիտական խորհրդի 2019 թվականի հունիսի 28-ի N5-Լ որոշումը.
- «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության ուսումնական պլանը (2019-2023թթ.).
- «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված դասընթացների առարկայական մասնագրերը:

3. Գոյություն ունեցող ծրագրի վերանայման հիմնավորումը

«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտական կրթական ծրագրի նպատակը արհեստավարժ ուսուցչի պատրաստումն է, որն իր գիտելիքներով ու գործունեությամբ կնպաստի մայրենի լեզվի ու գրականության, ազգային ավանդույթների ու ազգային մշակույթի ուսուցմանը, տարածմանն ու պահպանմանը:

«Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագիրը հայալեզու կրթության տարածքում ունի կարևորագույն նշանակություն, երկրի կրթական կարիքների բավարարման շրջանակում՝ առանցքային դերակատարում. այն ինքնության պահպանման ուղենիշ ծրագիր է:

«Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագիրը բանասիրական ֆակուլտետի ռազմավարության իրացման հիմնական ծրագրերից մեկն է և լիովին համապատասխանում է ԱրՊՀ առաքելությանը: Լինելով ԱրՊՀ առաջնային մասնագիտություններից և իր գոյությամբ ամենահինը՝ այն մասնագիտական բարձր պատրաստականությամբ մասնագետների պատրաստմամբ նպաստել է մասնագիտության դրական վարկանիշի ձևավորմանը և ապահովել այդ վարկանիշի պահպանման շարունակականությունը մինչ այսօր:

Գոյություն ունեցող ծրագրի վերանայումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ԱրՊՀ-ն, 2019թ. ընդունելով 2019-2023 թթ. ռազմավարական ծրագիրը, առաջնահերթորեն կարևորում էր կրթական ծրագրերի վերակառուցման և դրանց՝ ԱՀ ՈԱՇ-ին համապատասխանեցման խնդիրը (տե՛ս ՌԾ, էջ 13, Խնդիր 1.1):

Մինչ այդ ուսումնական պլանի փոփոխությունն իրականացվում էր համաձայն ամբիոնի ամենամյա քննարկումների արդյունքում ձևավորված առաջարկությունների, որ ներկայացվում և հաստատվում էին բուհի գիտական խորհրդում: Բացի այդ՝ ուսումնական պլանի իրականացումը ավանդական սկզբունքով էր. առարկաների ելքային արդյունքները քարտեզագրված չէին կրթական ծրագրի վերջնարդյունքների համապատասխանությամբ: ԱրՊՀ-ն չունեւր կրթական ծրագրի կառուցվածքն ու բովանդակությունը սահմանող նորմատիվային փաստաթուղթ:

ԱրՊՀ ռազմավարական ծրագրի Նպատակ 1, խնդիր 1.1-ից բխում և ենթադրվում էր ունենալ վերակառուցված կրթական ծրագիր՝ ԱՀ ՈԱՇ-ին համադրելի վերջնարդյունքներով, տեսանելի իրականացման համապատասխան քայլերով:

«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ մանկավարժության բակալավրի պատրաստումն ապահովող հիմնական կրթական ծրագրի մշակման համար անհրաժեշտ նորմատիվ փաստաթղթերն են՝

- «ԼՂՀ կրթության որակավորումների շնորհման կարգը հաստատելու մասին» ԼՂՀ Կառավարության 2013թ. ապրիլի 25-ի N944-Ն որոշում
- ԱրՊՀ ռազմավարական ծրագիր/2019-2020/
- ՄՈՒՀ-ի առաքելությունը և խնդիրները (ԱրՊՀ հայեցակարգը)

ԱրՊՀ-ն, 2019թ. ընդունելով 2019-2023 թթ. ռազմավարական ծրագիրը/ այսուհետ՝ ՌԾ/, առաջնահերթորեն կարևորում էր կրթական ծրագրերի վերակառուցման և դրանց՝ ԱՀ ՈԱՇ-ին համապատասխանեցման խնդիրը /տե՛ս ՌԾ, էջ13, Խնդիր1.1/:

Մինչ այդ՝ ուսումնական պլանների փոփոխություններն իրականացվում էին համաձայն ամբիոնների ամենամյա քննարկումների արդյունքում ձևավորված առաջարկությունների, որ ներկայացվում և հաստատվում էին բուհի գիտական խորհրդում: Բացի այդ՝ ուսումնական պլանի իրականացումը ավանդական սկզբունքով էր. առարկաների ելքային արդյունքները քարտեզագրված չէին կրթական ծրագրի վերջնարդյունքների համապատասխանությամբ: ԱրՊՀ-ն չունեւր կրթական ծրագրի կառուցվածքն ու բովանդակությունը սահմանող նորմատիվային փաստաթուղթ: Ինչ-որ առումով տարերայնորեն էր իրականացվում գործընթացը, թեպետ դասընթացների արդյունավետության բարձրացման խնդիրները մշտակա քննարկումների դաշտում և ուշադրության կենտրոնում էին:

ԱրՊՀ ռազմավարական ծրագրի Նպատակ 1, խնդիր 1.1-ից բխում և ենթադրվում էր ունենալ կրթական ծրագրերի պատասխանատուներ, որոնք անմիջականորեն ընդգրկվեն կրթական ծրագրերի մշակման գործընթացում:

2019թ. մարտի 14-ին ամբիոնների վարիչների ներկայացումների հիմքով առաջարկվել են **Հայոց լեզու և գրականություն** մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատուներ նշանակել *Ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնից՝ Հասմիկ Սուրենի Ղազարյանին/ հայոց լեզվի գծով/, գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնից՝ Նարինե Արարատի Հովհաննիսյանին/գրականության գծով/:*

Պատասխանատուները, հիմք ընդունելով «ԼՂՀ կրթության որակավորումների շնորհման կարգը հաստատելու մասին» ԼՂՀ Կառավարության 2013թ. ապրիլի 25-ի N944-Ն որոշման դրույթները, սահմանեցին **Հայոց լեզու և գրականություն** մասնագիտության վերջնարդյունքները/Հավելված 1/՝ կազմելով ՄԿԾ-ի և ԱՀ ՈԱՇ-ի համադրելության աղյուսակ/Հավելված 2/: Պատասխանատուները, վերջնարդյունքները սահմանելով, համապատասխան քննարկումների առաջարկով դիմել են ոլորտի մասնագետներին՝ թե՛

ներամբիոնային լսումների կազմակերպմամբ, թե՛ արտաքին շահակիցների /ԱՀ հանրակրթական ոլորտի պատասխանատուների, ուսանողների/ մասնակցությամբ քննարկումներով/Հավելված 3, արձանագրություն N 1/:

Ըստ վերջնարդյունքների՝ ուսումնական պլանում կատարվել են նախատեսված հետևյալ փոփոխությունները.

- Գործնական պարապմունքների տեսակարար կշռի մեծացում

Ըստ 2018-2022 ուսպլանի՝ նախատեսված լսարանային 2934 ժամից գործնական պարապմունքները կազմել են 1358 ժամ կամ 46.28%՝ 1606 ժամ դասախոսության հարաբերակցությամբ կամ 53.72%:

2019-2023 ուսումնական պլանով նախատեսվում է լսարանային 2970 ժամից 1586 ժամ գործնական պարապմունք կամ 53.40%՝ 1384 ժամ դասախոսության հարաբերակցությամբ կամ 46.60%. /տե՛ս հիմնավորում 1/.

- Փորձուսուցման /բոլոր տեսակների/ կազմակերպում ուսումնառության 7-րդ և 8-րդ կիսամյակներում, բանահյուսական փորձուսուցման հավելում /տե՛ս հիմնավորում 2/.
- Պարտադիր կամընտրական դասընթացների ցանկի ընդլայնում /հիմնավորում 3/.
- Մասնագիտական կամընտրական դասընթացների ցանկի կրճատում /հիմնավորում 4,5/.
- Որոշ դասընթացների հավելում՝ այլ դասընթացների կրճատմամբ /հիմնավորում 5/:

Հիմնավորում 1. Իբրև հիմք ընդունվել է ԱրՊՀ ՌԾ-ը: Գործնական պարապմունքների ավելացումը կապահովի վերջնարդյունքներով սահմանված մասնագիտական գործնական կարողությունների իրացումը: Փոփոխության անհրաժեշտությունը հաստատվել է նաև մասնագիտական ներամբիոնային քննարկումների և հանրակրթության ոլորտի մասնագետների, ուսանողական համակազմի հետ խորհրդակցություններում է /Հավելված 4, տե՛ս քաղվածք արձանագրությունից:

Հիմնավորում 2. Ուսումնական ծրագրով նախատեսված է փորձուսուցում 3 փուլով՝ ուսումնական-ճանաչողական, արտադրական/մանկավարժական/-կիրառական, արտադրական /մանկավարժական/-ամփոփիչ: Փորձուսուցման բոլոր փուլերը 7-րդ, և 8-րդ կիսամյակներում անցկացնելը պայմանավորված է այն հանգամանքով, որ հայոց լեզվի դասավանդման մեթոդիկական ուսուցանվում է 4-րդ կիսամյակում, իսկ հայ գրականության դասավանդման մեթոդիկական՝ 5-րդ կիսամյակում: Հայոց լեզվի և հայ գրականության դասավանդման մեթոդիկականների դասավանդման և ուսումնառության մեթոդների փոփոխությամբ դասընթացների արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ աշխատանքներ իրականացնելով՝ նշյալ դասընթացների ուսուցանումն իրականացվում է բազային դպրոցում՝ դպրոցի արհեստավարժ մասնագետի դասախոսավարությամբ: Այդպիսով՝ գործնական

պարապմունքներին ուսանողները հնարավորություն կունենան անմիջական մասնակից դառնալու դպրոցի ուսուցման գործընթացին և կատարելու համապատասխան առաջադրանքներ՝ տեսական գիտելիքների գործնական ստուգմամբ:

Հիմնավորում 3. Պարտադիր կամընտրական դասընթացների ցանկն ընդլայնվել է. ցանկում ընդգրկվել են այնպիսի դասընթացներ, որոնք նպաստում են ազգային արժեքների կարևորման գիտակցության ձևավորմանը, իրենց իրավունքների և պարտականությունների գիտակցված ընկալման ու պաշտպանության իրացմանը:

Հիմնավորում 4. ԱրՊՀ Կրթական ծրագրի կառուցվածքի և բովանդակության կարգին համապատասխան՝ կամընտրական դասընթացները կրճատվել են, հարստացվել է բուն մասնագիտական կառուցամասի բովանդակությունը:

Հիմնավորում 5.

ա/Բնագրի լեզվաբանական վերլուծություն, Բնագրի գրականագիտական վերլուծություն, Սփյուռքահայ գրականության պատմություն դասընթացները, լինելով կամընտրական, դարձել են բուն մասնագիտական գործնական և դասախոսական բնույթի դասընթացներ՝ ներառվելով ուսումնառության 6-րդ և 7-րդ կիսամյակներում: Նպատակը լեզվաբանական և գրականագիտական վերլուծական հմտությունների կիրառման և կարողությունների դրսևորման հնարավորությունների բացահայտումը և համակարգային վերլուծական մտածողության ձևավորումն է, սփյուռքահայ գրականության մասնագիտական իմացության խորացումը: *Բարդ նախադասություն, Բառակապակցություն, ԱՊՀ երկրների գրականություն, Մանկական գրականություն, Դարասկզբի իրադարձությունները հայ նորագույն գրականության մեջ, Հայկական տաղաչափություն, Ֆրանսահայ գրականությունը 1920-1960-ական թվականներին* կամընտրական դասընթացները կրճատվել են՝ ընդհանրական բնույթի, այլ դասընթացների շրջանակներում բավարար ուսումնասիրվելու հիմնավորմամբ, *Դանիել Վարուժանը և հեթանոսական գրական շարժումը* կամընտրական դասընթացը ընկալման բարդության և աշխարհայացքային հասունացման անհրաժեշտության պատճառով տեղափոխվել է մագիստրոսական կրթական ծրագիր: Մասնագիտական առանձին ուղղվածությամբ կատարելագործվելու, գիտական նորույթներ բացահայտելու, գրականության պատմական դերի, ազգային-քաղաքական նշանակության վերաբնորոման, հայագիտական գիտելիքների ընդլայնման նպատակով վերոնշյալ կամընտրական դասընթացները փոխարինվել են *Դիցաբանությունը հայ մատենագրության մեջ, Գ. Նարեկացին և հայ գրականությունը, <<Հովհաննես Թումանյան>>, Օտարագիր հայ գրականություն, <<Հակոբ Օջական>>* դասընթացներով:

բ/Գրաբար 3-ը փոխարինվել է *Միջին հայերենով* այն հիմնավորմամբ, որ *Հայոց լեզվի պատմություն դասընթացը, որի նպատակը* հայոց լեզվի գրային շրջանի զարգացման բոլոր փուլերի ամբողջացումն է՝ համեմատական քննությամբ, զուգադրական

վերլուծությամբ, ենթադրում է գրաքարից և ժամանակակից գրական հայերենների հետ միասին նաև միջին հայերենի համակարգային առանձնահատկությունների իմացություն, որն էլ հնարավոր է ստանալ համապատասխան դասընթացից:

գ/ Ուսումնական պլանում ընդգրկվել է *Գործնական դասընթաց հայոց լեզվից*. նպատակը բառագիտության՝ իմաստաբանական և ստուգաբանական իրողությունների համակողմանի ուսումնասիրությունն ու վերլուծությունների իրականացման հմտությունների ձևավորումն է:

Հընթացս մասնագիտության վերջնարդյունքների հիմքով կազմված ուսումնական պլանի քարտեզը հղվել է ՎՊՀ՝ հայոց լեզվի և գրականության ամբիոն /Հավելված 5/:

Ներկայացված առաջարկությունների հիման վրա լրամշակվել է պլանի քարտեզը և հաստատվել ֆակուլտետի խորհրդում/ Հավելված 6, տե՛ս քաղվածք արձանագրությունից/:

4.Աշխատաշուկայի վերլուծություն:

Մասնագիտական կոմպետենցիաների նկարագրում

«Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագիրը մշակելիս կարևորվել են արտաքին փորձագետների և ներքին շահակիցների կարծիքները, իրականացվել են քննարկումներ (տե՛ս Հավելված Բ. ՖԽ արձանագրություններ /: Ուսումնասիրվել են նաև վերջին 5 տարիների ընդունելության արդյունքները, որոշարկվել ԱրՊՀ դիմորդների թվում *Հայոց լեզու և գրականություն* մասնագիտությունն ընտրած դիմորդների բաժնեմասը:

Ըստ՝ որի

	2014-2015	2015-2016	2016-2017	2017-2018	2018-2019	2019-2020
ԱրՊՀ ընդունվածների թիվը	548	649	640	483	345	719
Առկա	375	468	487	378	274	578
Հեռակա	173	181	153	105	71	141
Հայոց լեզու և գրականություն մասնագիտությունն ընտրողների թիվը	31	64	71	61	40	69
Առկա	15	53	50	47	30	43
Հեռակա	16	11	21	14	10	26

Հայոց լեզու և գրականություն մասնագիտությունն ընտրողների բաժնեմասը	5.65%	9.86%	11.09%	12.62%	11.59%	9.59%
Առկա	4%	11.32%	10.26%	12.43%	10.64%	7.43%
Հեռակա	9.2%	6.07%	13.72%	13.33%	14.08%	18.43%

Աղյուսակի արդյունքները հավաստում են, որ *Հայոց լեզու և գրականություն* մասնագիտության (առկա և հեռակա) ընտրությունը 2015 թվականից նկատելի աճողական տեմպ է ստացել՝ որոշակի տատանումներով (տոկոսային հարաբերակցությամբ): Սրան մի կողմից, բնականաբար, նպաստել է ընդունելության պայմանների փոփոխությունը, մյուս կողմից՝ դիմորդների հետաքրքրվածությունը, որում վճռորոշ նշանակություն ունեն մասնագիտության դրական վարկանիշը և մասնագիտության արդիականությունը հայկական տարածաշրջանում:

Նոր կրթական ծրագիրը(վերջնարդյունքները և ուսպլանի քարտեզը) խորհրդատվական քննության է հղվել նաև արտաքին կարծիքի՝ ՀՀ Վանաձորի պետական մանկավարժական համալսարանի հայեց լեզվի և գրականության ամբիոն և ներքին շահակիցներից Ստեփանակերտի Խ. Աբովյանի անվան հ.1 հիմնական դպրոց (տե՛ս Հավելված Գ):

5.Արցակցային դիրքը

Հատկանշելի է, որ 1969 թվականից, երբ հիմնադրվեց Արցախի առաջին բարձրագույն կրթական հաստատությունը (Բաքվի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղը), հայոց լեզվի և գրականության ամբիոնը գործում էր տարբեր անվանումներով ու կառուցվածքով: Սկզբնապես այն ներկայացվել է որպես ամբիոնի դեր կատարող հայոց լեզվի և գրականության մասնագիտական առարկայական հանձնաժողով: 1974 թվականին բուհն ունեցել է *Հայոց լեզու և գրականություն* մասնագիտության առաջին շրջանավարտները, և նույն տարում էլ ձևավորվել է հայոց լեզվի և գրականության ամբիոնը: 2002թ. հայոց լեզվի և գրականության ամբիոնը վերակազմավորվել է *հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի* ու *հայ գրականության և ժուռնալիստիկայի* ամբիոնների. մինչ օրս երկու ամբիոններն ապահովում են *հայոց լեզվի և գրականության ուսուցիչ* որակավորմամբ մասնագետների պատրաստումը:

50-ամյա իր գործունեության ընթացքում ամբիոնը բակալավրիատի ծրագրով ունեցել է 2116 դիմորդ, որն ԱրՊՀ ընդհանուր դիմորդների թվում/ 24593/ կազմում է 8.6%, և թողարկել է 1872 շրջանավարտ, որը ԱրՊՀ շրջանավարտների ընդհանուր թվում (20580) կազմում է 9.09%:

Վերջին 5 տարիների կտրվածքով առաջադիմության ցուցանիշները գրեթե նույնական են. 2015-2016՝ 79.15%, 2017-2018-78.5%, 2018-2019- 78%: Յուրաքանչյուր կուրսի առաջադիմությունը, ըստ կիսամյակների, ցույց է տալիս կայուն աճ. օրինակ՝ 2016-2017 ուստարում 1-ին կիսամյակում *Հայոց լեզու և գրականություն* մասնագիտության 1-ին կուրսի ուսանողների 33.75%-ը առանց եզրափակիչ գնահատման դասընթացներից ստացել է 7-8 միավոր, 16.25%-ը՝ 4-ից ցածր միավոր: 2-րդ փուլում 7-8 միավոր ստացել է 45.41 %-ը, 4-ից ցածր՝ 7.91%-: 2-րդ կիսամյակի 1-ին փուլում 7-8 միավոր ստացել է 47.91%-ը, 4-ից ցածր՝ 7.81%-ը, 2-րդ փուլում 7-8 միավոր ստացել է 71.87 %-ը, 4-ից ցածր՝ 2.08%-ը (Ըստ տարիների և կիսամյակների, ըստ գնահատման ձևերի՝ տե՛ս *Հավելված 9*) :

ԱՀ հանրակրթական հաստատություններում, պետական կառավարման մարմիններում, հեռուստառադիոյում, հասարակական կազմակերպություններում մեծ է նաև *Հայոց լեզու և գրականություն* մասնագիտության շրջանավարտների ներգրավվածությունը:

Ամբիոնների պրոֆեսորադասախոսական համակազմի մասնագիտական որակավորումը թե՛ բազային կրթությամբ, թե՛ մասնագիտացվածությամբ համապատասխանում է շնորհիվող որակավորմանը (տե՛ս Հավելված 4):

6. Ծրագրի նպատակները և խնդիրները

Կրթական ծրագրի նպատակն է.

Նպատակ 1. *Ուսանողներին տրամադրել հայոց լեզվի, լեզվաբանության, հայ գրականության ու գրականագիտության ոլորտի հիմնարար գիտելիք՝ մանկավարժության հենքով և ապագա մասնագիտական գործունեությանը համապատասխան:*

Նպատակ 2. *Խթանել ուսանողների ստեղծագործական, քննադատական մտածողությունը, զարգացնել վերլուծական կարողությունները:*

Նպատակ 3. *Խրախուսել նախաձեռնողականությունը, մասնագիտական կարգապահությունը, ինքնուրույն աշխատանքը, պատասխանատվության հանձնառումը:*

Նպատակ 4. *Օժտել ըստ իրադրության լեզվական համապատասխան վարք դրսևորելու, խնդիրներ առաջադրելու և ինքնուրույն լուծումներ գտնելու, դրանց իրացումն ապահովելու կարողություններով:*

Կրթական ծրագրով սահմանված են կրթական արդյունքները, որոնց ձեռքբերումը կապահովի ծրագրի նպատակայնության իրացումը.

Ա.Մասնագիտական գիտելիք և իմացություն (նշվում է՝ Մ)

Մ1.Լեզվաբանական կամ գրականագիտական հիմնարար հասկացությունների, տեսությունների, մեթոդների իմացություն

Մ2.Գրական երկերի ժանրային նկարագրի ճանաչողություն, առանձնահատկությունների վերհանման, վերլուծման, դասակարգման և գնահատման սկզբունքների իմացություն

Մ3.Բնագրի լեզվական, լեզվառճական և գրականագիտական առանձնահատկություններն ընկալելու, խոսքի կառուցման տեխնիկային տիրապետելու, դրանց վերլուծության եղանակների ընտրության և կիրառման իմացություն

Մ4.Լեզվաբանական կամ գրականագիտական ուսումնասիրության, վերլուծության արդյունքները հիմնավորելու և գնահատելու իմացություն

Մ5.Լեզվաբանական կամ գրականագիտական համատեքստում նորույթն ընկալելու և մեկնաբանելու իմացություն

Մ6.Հայերենի (գրաբարի, միջին հայերենի, ժամանակակից արևելահայերենի ու արևմտահայերենի, բարբառների) լեզվական համակարգերի վերլուծության և զուգադրության հմտություն

Մ7.Գրական երկի կառուցվածքային վերլուծության, ստեղծագործական մտածողության բացահայտման, ու քննադատական մտածողության ձևավորման գիտելիք

Բ.Գործնական մասնագիտական կարողություններ

Մ8.Մասնագիտական մտածողության հենքով ինքնուրույն գործունեության կազմակերպման և իրականացման կարողություն

Մ9.Արդի հայերենի իրողությունների (հնչյունաբանական, բառագիտական, քերականական) զուգադրական քննության իրականացման կարողություն

Մ10.Գիտական եզրահանգումներով հայ և համաշխարհային գրական կապերի զուգորդված վերլուծություն կատարելու կարողություն

Մ11.Խմբագրական, սրբագրական, թարգմանչական աշխատանք կատարելու, համապատասխանաբար նաև բնագրային վերլուծություն կատարելու կարողություն

Մ12. Արդի շրջանի գրականագիտական ու լեզվաբանական իրողությունների նորմավորման առանձնահատկությունների վերհանում, տեղաշարժերի, միտումների գնահատման կարողություն

Մ13. Փաստերից՝ դեպի ընդհանրացում և ընդհանրացումներից՝ դեպի փաստեր վերլուծություն կատարելու կարողություն

Մ14. Ընտրված գիտական նյութի համաժամանակյա և տարաժամանակյա, ապաժամանակյա քննության և գնահատման կարողություն

Մ15. Գիտահետազոտական աշխատանք կատարելու կարողություն

Մ16. Թե՛ մասնագիտության, թե՛ մասնագիտությանը հարակից միջգիտակարգերի շրջանակներում զուգադրական աստիճանակարգային վերլուծության իրականացման կարողություն

Գ.Ընդհանրական փոխանցելի կարողություններ (նշվում է՝ Ը)

Ը1. Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ մասնագիտական նյութերի հավաքագրման, ուսումնասիրման և դրանք հրապարակային ներկայացնելու կարողություն

Ը2. Սովորողների միջանձնային հարբերությունների, տարիքային առանձնահատկությունների, սոցիալական բնութագրիչների հաշվառմամբ՝ խնդիրների լուծման եղանակների, միջոցների ընտրության և կիրառման կարողություն

Ը3. Մասնագիտական ու անձնային աճը պլանավորելու կարողություններ

Ը4. Խմբային աշխատանք ղեկավարելու պատասխանատվություն, անհատական աշխատանքի գնահատման և եզրահանգում կատարելու կարողություն

Ը5. Խնդիրներ առաջադրելու, լուծելու և լուծման ուղիների եղանակներ ու միջոցներ ընտրելու կարողություններ

Ը6. Ազգային և համամարդկային արժեքների կարևորմամբ, իրենց իրավունքների և պարտականությունների գիտակցված ընկալմամբ անձնական պատասխանատվություն և համապատասխան վարք դրսևորելու կարողություն:

Կրթական ծրագրի խնդիրներն են՝

Կրթական ծրագրով սահմանված արդյունքների իրացումը միտված է լուծելու մասնագիտական հետևյալ խնդիրները.

Խնդիր 1. Հայոց լեզու և գրականություն առարկաների իմացության, գիտելիքի կիրառության բարձր պատրաստականություն, հայերենի տեղի և դերի արժևորման գիտակցում և այդ ընկալմամբ մասնագիտական գործունեության իրականացում:

Խնդիր 2. Սովորեցնել սովորել ինքնուրույն, գիտելիքը դարձնել գործունեության բանալի, ուղղորդելով խթանել սովորողի ինքնուրույնությունը:

Խնդիր 3. Ղեկավարել ստեղծագործական աշխատանքներ, խթանել մրցույթներին սովորողի մասնակցությունը, աջակցել լավագույն աշխատանքների հրապարակային ներկայացմանը

Խնդիր 4. Ըստ իրադրության՝ դրսևորել կազմակերպչական-կառավարչական հմտություններ՝ միջանձնային հարաբերություններում դրսևորելով հանդուրժողականություն և օրինակելի լեզվական վարք, անկանխատեսելի իրավիճակներում՝ որոշումներ կայացնելու և ղեկավարելու վճռականություն:

(ՄԿԾ-ի կրթական խնդիրների հարաբերությունը ծրագրի նպատակներին տե՛ս Հավելված 2 /2.1):

7. Փորձուսուցման կազմակերպումը

Ուսումնառության ընթացքում՝ 4-րդ, 7-րդ և 8-րդ կիսամյակներում կազմակերպվում է փորձուսուցում. 4-րդ կիսամյակում՝ երկշաբաթյա (բանահյուսական/բանահավաքչական/), 7-րդ կիսամյակում՝ երկշաբաթյա (ուսումնական-ճանաչողական), 8-րդ կիսամյակում՝ 8 շաբաթյա(1-ին փուլը՝ արտադրական. կիրառական -վերլուծական, 2-րդ փուլը՝ ամփոփիչ-գնահատող):

Փորձուսուցման հիմնական՝ մանկավարժական փուլերը 7-րդ և 8-րդ կիսամյակներում անցկացնելը պայմանավորված է այն հանգամանքով, որ հայոց լեզվի դասավանդման մեթոդիկան ուսուցանվում է 4-րդ կիսամյակում, իսկ հայ գրականության դասավանդման մեթոդիկան՝ 5-րդ կիսամյակում: Հայոց լեզվի և հայ գրականության դասավանդման մեթոդիկաների դասավանդման և ուսումնառության մեթոդների փոփոխությամբ դասընթացների արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ աշխատանքներ իրականացնելով՝ նշյալ դասընթացների ուսուցանումն իրականացվում է բազային դպրոցում՝ դպրոցի արհեստավարժ մասնագետի դասախոսավարությամբ: Դա հնարավորություն է տալիս ուսանողներին գործնական պարապմունքների ժամանակ դառնալու անմիջական մասնակիցը դպրոցի ուսուցման գործընթացին և կատարելու համապատասխան առաջադրանքներ՝ տեսական գիտելիքների գործնական ստուգմամբ:

1. 4-րդ կիսամյակում անցկացվող **«Բանահյուսական պրակտիկայի»** նպատակը բանահյուսական, բանագիտական նյութերի՝ մայրենի խոսվածքով հավաքագրումն է, դրանց անձնագրավորումը և բանագիտական պահոցի ստեղծումը: Փորձուսուցման նախապայմանը բարբառիմացությունն է, բարբառով նյութի գրառման հմտություններին տիրապետելը: Մինչ փորձուսուցման մեկնելը ուսանողը համապատասխան գիտելիքներ և հմտություններ է ձեռք բերում *Բարբառագիտության հիմունքներ* դասընթացից: Փորձուսուցումն ունի ռազմավարական նշանակություն. այն հնարավորություն է տալիս ուսանողներին գրառելու

և հավաքագրելու այն ժողովրդագիտական նյութը, որը կարող է դառնալ Արցախի բարբառի, պատմության ու մշակույթի գիտական ուսումնասիրությունների համար սկզբնաղբյուր:

2. Մանկավարժական՝ մասնագիտական փորձուսուցման առաջին հիմնական շրջափուլը սկսվում է 7-րդ կիսամյակից՝ **«Ուսումնաճանաչողական կամ հոգեբանամանկավարժական պրակտիկա»** խորագրով:

Փորձուսուցման նպատակը հիմնականում ուսումնաճանաչողական է և կրում է հոգեբանամանկավարժական բնույթ:

Այս փորձուսուցման ընթացքում ուսանողը պետք է՝

- կազմի փորձուսուցման հանձնարարությունների անհատական օրացուցային պլան,
- մտապահի և գրանցի փորձուսուցման ընթացքում իր կողմից դիտարկված փաստերը,
- ծանոթանա ուսումնական հաստատությանը, դրա կառուցվածքին, գործունեության պայմաններին, և համապատասխանությանը ներառական կրթության պահանջներին, գործառույթներին, աշխատանքի ռեժիմին, ուսումնադաստիարակչական աշխատանքների և միջոցառումների համալիր և հեռանկարային ծրագրերին, տարբեր ստորաբաժանումների գործառույթներին ու աշխատանքային ծրագրերին, պլաններին, ուսուցման գործընթացի կազմակերպման սկզբունքներին, ուսումնամեթոդական աշխատանքների իրականացման ընթացակարգերին, դպրոցի փաստաթղթավարման և մատենավարության հիմունքներին,
- իրականացնի մանկավարժական գործընթացների տարբեր տեսակների, մանկավարժների և աշակերտների գործունեության, աշակերտների անատոմիական և ֆիզիոլոգիական փոփոխությունների, հոգեկան և մտավոր զարգացման գործընթացների, վարքի, դասարանի և դպրոցի հոգեբանական մթնոլորտների, ուսուցման գործընթացի պայմանների դիտումներ,
- իրականացնի առանձին աշակերտների անձի, դասարանների հոգեբանական մթնոլորտի շուրջ հոգեբանամանկավարժական տվյալների նախնական հավաքագրում,
- ծրագրի և իրականացնի աշակերտների հետ նպատակաուղղված մանկավարժական հաղորդակցում,
- ճանաչի, վեր հանի և մեկնաբանի հոգեբանամանկավարժական տեղեկությունները,
- ուսումնասիրությունների արդյունքներով կազմի առանձին աշակերտների անձի, դասարանների հոգեբանական մթնոլորտի հոգեբանամանկավարժական բնութագրեր,
- իրականացնի դասավանդման և դաստիարակչական գործընթացների կազմակերպման օրինաչափությունների և առանձնահատկությունների, աշակերտների ճանաչողական հետաքրքրությունների զարգացման և դրդապատճառների շուրջ հոգեբանամանկավարժական տվյալների հավաքագրում,

- համագործակցի դասդեկի, ֆիզդեկի և ռազմագիտության գծով պատասխանատուի առարկայական ուսուցչների հետ արտադպրոցական, արտադասարանական միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպման ու անցկացման ժամանակ,
- վարի փորձուսուցման ուսանողական թղթապանակ, կատարի ընդհանրացումներ պրակտիկայի այս փուլի համար և ձևակերպի արդյունքները,
- ներկայացնի հաշվետվություն՝ կցելով մեկ աշակերտի, դասարանի հոգեբանական մթնոլորտի հոգեբանամանկավարժական բնութագրեր՝ որակապես արժևորված հոգեբան-մանկավարժի, իր կողմից իրականացված արտադասարանական կամ արտադպրոցական աշխատանքի պլան՝ որակապես արժևորված պրակտիկայի խմբի ղեկավար-մեթոդիստի կողմից:

Երկրորդ և երրորդ փուլերը միմյանց հաջորդող են.

Մանկավարժական (աջակցող) փորձի (կիրառական-վերլուծական) պրակտիկա, որը նախատեսված է դպրոցի ուսումնադաստիարակչական, արտադասարանական աշխատանքներին, տարբեր կրթական ծառայությունների իրականացմանը, ինչպես նաև դպրոցավարության գործընթացներին և ուսուցչի աշխատանքների պլանավորմանը, ուսուցման գործընթացի նախագծմանը և նախապատրաստման աշխատանքներին ծանոթացնելու և մասնակցություն ցուցաբերելու համար: Այս պրակտիկայի ընթացքում ուսանողը պետք է՝

- իրականացնի աշակերտական կոլեկտիվների կառավարման գործառույթ դասդեկի գործունեության շրջանակում, մասնակցի դասդեկի կողմից ծնողների հետ տարվող աշխատանքներին, ծնողական ժողովներին,
- իրականացնի ուսումնադաստիարակչական համալիր աշխատանքային պլանի, տնօրենի, տնօրենի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տեղակալի, դասդեկի աշխատանքային պլանների վերլուծություն,
- կատարի դասալսումներ պրակտիկայի խմբի հետ, մասնակցի դասերի վերլուծություններին, քննարկումներին, դրանց վերաբերյալ ներկայացնի վերլուծությունների համառոտ նկարագրեր,
- ծանոթանա առարկայական մեթոդական միավորման աշխատանքներին, աշխատանքների պլանավորմանը, փաստաթղթավարությանը,
- մասնակցի դպրոցի ուսուցչի կամ մեթոդիստի կողմից անցկացվող ուսուցողական-ցուցադրական դասերին, մասնակցի վերլուծություններին,
- անցկացնի փորձնական դասեր,
- իրականացնի դասարանի ղեկավարի գործառույթներ,

- անցկացնի արտադասարանական կամ արտադպրոցական պարապմունք կամ միջոցառում, էքսկուրսիա,
- շարունակի թղթապանակի վարումը, համալրի փորձուսուցման ուսանողական թղթապանակը այլ փաստաթղթերով, ձևակերպի արդյունքները և կատարի ընդհանրացումներ փորձուսուցման այս փուլի արդյունքների հիման վրա և գրի ամփոփում,
- ներկայացնի հաշվետվություն՝ կցելով դասերի պլանավորումները, դրանց վերլուծությունները՝ որակապես արժևորված մանկավարժի և մեթոդիստի կողմից, իր կողմից իրականացված արտադասարանական կամ արտադպրոցական աշխատանքի պլան՝ որակապես արժևորված պրակտիկայի խմբի ղեկավար-մեթոդիստի կողմից:

Ամփոփիչ-գնահատող պրակտիկա. այս փորձուսուցման ընթացքում նախատեսվում է ուսանողների ներգրավում ակտիվ դասավանդման գործընթացի մեջ, այսինքն՝ աշխատանք ուսուցչի պաշտոնում:

Այս փորձուսուցման ընթացքում ուսանողը պետք է՝

- իրականացնի դպրոցի տնօրենի, տնօրենի՝ ուսումնական աշխատանքների գծով տեղակալի գործառույթների, դպրոցի փաստաթղթավարության ուսումնասիրություն և գնահատում,
- իրականացնի ակտիվ մանկավարժական գործունեություն ուսուցչի պաշտոնում, միաժամանակ իրականացնի դասղեկի գործառույթներ,
- դասավանդի առնվազն երկու դասարանում,
- մասնակցի մյուս ուսանողների կողմից անցկացվող դասերին և դրանց քննարկումներին,
- շարունակի թղթապանակի վարումը, այն համալրի իր վերլուծություններով ու ընդհանրացումներով, կատարի ընդհանրացումներ պրակտիկայի այս փուլի և պրակտիկայի ամբողջ գործընթացի վերաբերյալ և ձևակերպի արդյունքները,
- ներկայացնի հաշվետվություն՝ կցելով դասերի պլանավորումները, դրանց վերլուծություններն ու գնահատումները,
- պաշտպանի ներկայացված հաշվետվությունը(փորձուսուցման առարկայական նկարագրի նմուշ օրինակն ու աշխատանքային պլան- ժամանակացույցը կցվում են/ **Հավելված 7**):

8.Ծրագրի կրթական վերջնարդյունքները

Մասնագիտության կրթական ծրագրի վերջնարդյունքները

	Ընդհանրական		Մասնագիտական
--	-------------	--	--------------

Ը 1	Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ մասնագիտական նյութերի հավաքագրման, ուսումնասիրման և դրանք հրապարակային ներկայացնելու կարողություն	Մ 1	Լեզվաբանական կամ գրականագիտական հիմնարար հասկացությունների, տեսությունների, մեթոդների իմացություն
Ը 2	Սովորողների միջանձնային հարբերությունների, տարիքային առանձնահատկությունների, սոցիալական բնութագրիչների հաշվառմամբ՝ խնդիրների լուծման եղանակների, միջոցների ընտրության և կիրառման կարողություն	Մ 2	Գրական երկերի ժանրային նկարագրի ճանաչողություն, առանձնահատկությունների վերհանման, վերլուծման, դասակարգման և գնահատման սկզբունքների իմացություն
Ը 3	Մասնագիտական ու անձնային աճը պլանավորելու կարողություններ	Մ 3	Բնագրի լեզվական, լեզվաոճական և գրականագիտական առանձնահատկություններն ընկալելու, խոսքի կառուցման տեխնիկային տիրապետելու, դրանց վերլուծության եղանակների ընտրության և կիրառման իմացություն
Ը 4	Խմբային աշխատանք ղեկավարելու պատասխանատվություն, անհատական աշխատանքի գնահատման և եզրահանգում կատարելու կարողություն	Մ 4	Լեզվաբանական կամ գրականագիտական ուսումնասիրության, վերլուծության արդյունքները հիմնավորելու և գնահատելու իմացություն
Ը 5	Խնդիրներ առաջադրելու, լուծելու և լուծման ուղիների եղանակներ ու միջոցներ ընտրելու կարողություններ	Մ 5	Լեզվաբանական կամ գրականագիտական համատեքստում նորույթն ընկալելու և մեկնաբանելու իմացություն
Ը 6	Ազգային և համամարդկային արժեքների	Մ 6	Հայերենի /գրաբարի, միջին հայերենի, ժամանակակից

	կարևորմամբ, իրենց իրավունքների և պարտականությունների գիտակցված ընկալմամբ անձնական պատասխանատվություն և համապատասխան վարք դրսևորելու կարողություն		արևելահայերենի ու արևմտահայերենի, քաղաքացիական/լեզվական համակարգերի վերլուծության և զուգադրության հմտություն
		Մ 7	Գրական երկի կառուցվածքային վերլուծության, ստեղծագործական մտածողության բացահայտման, ու քննադատական մտածողության ձևավորման գիտելիք
		Մ 8	Մասնագիտական մտածողության հենքով ինքնուրույն գործունեության կազմակերպման և իրականացման կարողություն
		Մ 9	Արդի հայերենի իրողությունների /հնչյունաբանական, բառագիտական, քերականական/զուգադրական քննության իրականացման կարողություն
		Մ 10	Գիտական եզրահանգումներով հայ և համաշխարհային գրական կապերի զուգորդված վերլուծություն կատարելու կարողություն
		Մ11	Խմբագրական, սրբագրական, թարգմանչական աշխատանք կատարելու, համապատասխանաբար նաև բնագրային վերլուծություն կատարելու կարողություն
		Մ 12	Արդի շրջանի գրականագիտական ու լեզվաբանական իրողությունների նորմավորման առանձնահատկությունների

			վերհանում, տեղաշարժերի, միտումների գնահատման կարողություն
		Մ 13	Փաստերից՝ դեպի ընդհանրացում և ընդհանրացումներից՝ դեպի փաստեր վերլուծություն կատարելու կարողություն
		Մ 14	Ընտրված գիտական նյութի համաժամանակյա և տարաժամանակյա, ապաժամանակյա քննության և գնահատման կարողություն
		Մ 15	Գիտահետազոտական աշխատանք կատարելու կարողություն
		Մ 16	Թե՛ մասնագիտության, թե՛ մասնագիտությանը հարակից միջգիտակարգերի շրջանակներում գուգադրական աստիճանակարգային վերլուծության իրականացման կարողություն

Կրթական ծրագրի վերջնարդյունքների քարտեզ

Մ/Գ	Մոդուլի անվանում	Մասնագիտական																Ընդհանրական փոխանցելի					
		Մ1	Մ2	Մ3	Մ4	Մ5	Մ6	Մ7	Մ8	Մ9	Մ10	Մ11	Մ12	Մ13	Մ14	Մ15	Մ16	Ը1	Ը2	Ը3	Ը4	Ը5	Ը6
B01	Հայոց պատմության հիմնահարցեր-1								✓					✓	✓								✓
B02	Հայոց պատմության հիմնահարցեր-2								✓					✓	✓								✓
B74	Անգլերեն լեզու 1								✓			✓								✓			
B75	Անգլերեն լեզու 2								✓			✓								✓	✓		
B46	Ռուսերեն-1								✓			✓								✓			
B47	Ռուսերեն-2								✓			✓								✓	✓		
B44	Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ								✓									✓		✓	✓		
B50	Արտակարգ իրավիճ. և քաղ. պաշտպան. հիմունքներ								✓										✓		✓		

B38	Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ								✓										✓					
B10	Փիլիսոփայության հիմունքներ								✓				✓			✓						✓	✓	
B11	Ֆիզդաստիարակություն																							
B51	Տնտեսագիտության հիմունքներ								✓							✓					✓	✓		
B07	Իրավունքի հիմունքներ																							
B11	Քաղաքագիտության հիմունքներ																	✓			✓		✓	
B35	Ռազմագիտության հիմունքներ																	✓			✓		✓	
B13	Տրամաբանության հիմունքներ								✓				✓			✓						✓		
B08	Բարոյագիտության հիմունքներ								✓										✓		✓		✓	
B12	Կրոնագիտության հիմունքներ												✓	✓						✓		✓	✓	
B03	Մշակութաբանության հիմունքներ												✓	✓						✓		✓	✓	
B26	Ազգագրության հիմունքներ															✓							✓	
B40	Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր								✓				✓			✓						✓		
B149	Մանկավարժություն1								✓										✓		✓	✓		
B150	Մանկավարժություն 2								✓										✓		✓	✓		
B152	Հոգեբանություն								✓										✓		✓	✓		
B148	Ներառական կրթություն								✓										✓		✓	✓		
B71	1-ին բուժօգնություն և երեխաների առողջության պահպանման հիմունքներ																		✓		✓			
B01	Ժամանակակից հայոց լեզվի հնչյունաբանություն	✓			✓	✓	✓			✓		✓	✓		✓									
B02	Ժամանակակից հայոց լեզվի բառագիտություն	✓			✓	✓	✓			✓		✓	✓	✓	✓						✓			
B03	Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանություն 1	✓			✓	✓	✓			✓		✓	✓	✓	✓	✓	✓							
B04	Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանություն 2	✓			✓	✓	✓			✓		✓	✓	✓	✓	✓	✓				✓			
B05	Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն 1	✓			✓	✓	✓			✓		✓	✓	✓	✓	✓	✓							
B06	Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն 2	✓			✓	✓	✓			✓		✓	✓	✓	✓	✓	✓				✓			
B09	Խոսքի մշակույթի հիմունքներ և ոճաբանություն	✓		✓	✓	✓				✓			✓	✓			✓					✓		

B07	Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա	✓						✓										✓	✓			
B08	Արևմտահայերեն	✓		✓		✓			✓			✓	✓	✓		✓						
B10	Գրաբար 1	✓		✓		✓						✓	✓		✓							
B11	Գրաբար 2	✓		✓		✓						✓	✓		✓					✓		
B12	Միջին հայերեն	✓		✓		✓						✓	✓		✓			✓				
B13	Հայոց լեզվի պատմություն	✓		✓		✓						✓	✓		✓						✓	
B16	Լեզվաբանության հիմունքներ 1	✓		✓				✓				✓	✓	✓		✓						
B17	Լեզվաբանության հիմունքներ 2	✓		✓				✓				✓	✓	✓		✓						
B18	Ընդհանուր լեզվաբանություն	✓		✓				✓				✓	✓	✓	✓	✓						
B24	Բնագրի լեզվաբանական վերլուծություն								✓		✓	✓	✓	✓		✓				✓		
B14	Գործնական դասընթաց հայոց լեզվից								✓				✓	✓		✓						
B15	Բարբառագիտության հիմունքներ	✓				✓		✓					✓	✓								
B02	Հայ հին և միջնադարյան գրականություն 1	✓	✓		✓	✓		✓			✓		✓									
B20	Հայ հին և միջնադարյան գրականություն 2	✓	✓		✓	✓		✓			✓		✓									
B01	Հայ ժողովրդական բանահյուսություն	✓	✓		✓	✓		✓			✓		✓									
B15	Գրականագիտության ներածություն	✓	✓		✓	✓		✓				✓	✓									
B16	Գրականագիտության տեսություն		✓		✓	✓		✓			✓	✓	✓						✓			
B03	19-րդ դարի հայ գրականության պատմություն	✓	✓		✓	✓		✓			✓		✓									
B13	17-19-րդ դդ. արտ. գրակ. պատմ.	✓	✓		✓	✓		✓			✓		✓		✓							
B05	19-րդ դ/վ 20 -րդ դ/սկզբի հայ գրական-ն պատմ-ն 1		✓		✓	✓		✓			✓		✓		✓							
B06	19-րդ դ/վ 20 -րդ դ/սկզբի հայ գրական-ն պատմ-ն 2		✓		✓	✓		✓			✓		✓		✓							
B10	Հայ գրաքննադատության պատմություն	✓	✓		✓	✓		✓			✓		✓	✓	✓						✓	
B12	Անտիկ և վերածննդի արտ. գրականություն	✓	✓		✓	✓		✓			✓		✓									
B11	Հայ գրականության դասավանդման մեթոդիկա							✓										✓		✓		

B14	19-20-րդ դդ. արտ. գրականության պատմություն	✓	✓		✓	✓		✓			✓				✓	✓							
B17	Ռուս գրականության պատմություն	✓	✓		✓	✓		✓			✓				✓								
B23	Մփյուռքահայ գրականության պատմություն		✓		✓	✓		✓			✓		✓		✓	✓							
B07	Նորագույն շրջանի հայ գրականության պատմ. 1		✓		✓	✓		✓			✓		✓	✓	✓	✓							
B08	Նորագույն շրջանի հայ գրականության պատմ. 2		✓		✓	✓		✓			✓		✓	✓		✓							
B09	Արդի հայ գրականության պատմություն		✓		✓	✓		✓			✓		✓		✓	✓							
B28	Բնագրի գրականագիտական վերլուծություն			✓									✓	✓						✓			
B21	Ձևաբանության արդիական հարցեր								✓	✓			✓	✓	✓					✓			
B21	Քերականական տարարժեքությունը ժամ. հայ-ում												✓							✓			
B22	Կետադրություն					✓			✓				✓									✓	
B22	Դարձվածաբանություն			✓		✓			✓											✓			
B25	Ղարաբաղի բարբառ						✓		✓					✓	✓								
B25	Հայոց տեղանվանագիտություն	✓												✓	✓	✓						✓	
B21	Աստվածաշունչը և հայ գրականությունը		✓		✓	✓		✓			✓			✓									✓
B21	Դիցաբանությունը հայ մատենագրության մեջ		✓		✓	✓		✓			✓			✓									✓
B04	<< Հովհաննես Թումանյան >>				✓	✓		✓			✓		✓	✓									✓
B04	Գր. Նարեկացին և հայ գրականությունը				✓	✓		✓			✓		✓	✓									✓
B25	Օտարագիր հայ գրականություն				✓	✓		✓			✓		✓	✓									✓
B25	Հակոբ Օշական				✓	✓		✓			✓		✓	✓									✓
	Կուրսային աշխատանք-1							✓								✓			✓			✓	
	Կուրսային աշխատանք-2							✓								✓			✓			✓	
	Բանահավաքչական փորձուսուցում							✓								✓			✓			✓	
	Փորձուսուցում ուսումնական							✓										✓				✓	
	Փորձուսուցում մանկավարժական (կիրառական)																	✓	✓	✓	✓	✓	✓
	Փորձուսուցում մանկավարժական																	✓	✓	✓	✓	✓	✓

	(ամփոփիչ)																							
	Ամփոփիչ ատեստավորում																							

Կրթական ծրագրի վերջնարդյունքները (Դասընթացի մասնագրի համապատասխան)

Դասընթացի կոդ	Դասընթացի անվանումը	Վերջնարդյունքներ
B01	Հայոց պատմության հիմնահարցեր-1	Մ8՝ Մ13 Մ14 Ը6
B02	Հայոց պատմության հիմնահարցեր-2	Մ8 Մ13 Մ14 Ը6
B74	Անգլերեն լեզու 1	Մ8 Մ11 Ը3
B75	Անգլերեն լեզու 2	Մ8 Մ11 Ը3 Ը4
B46	Ռուսերեն-1	Մ8 Մ11 Ը3
B47	Ռուսերեն-2	Մ8 Մ11 Ը3 Ը4
B44	Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ	Մ8 Ը1 Ը3 Ը4
B50	Արտակարգ իրավիճ. և քաղ. պաշտպան. հիմունքներ	Մ8 Ը2 Ը4
B38	Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ	Մ8. Ը2
B10	Փիլիսոփայության հիմունքներ	Մ8 Մ13 Մ16
B11	Ֆիզդաստիարակություն	
B51	Տնտեսագիտության հիմունքներ	Մ8 Մ16 Ը2 Ը4
B07	Իրավունքի հիմունքներ	Մ8 Մ16 Ը4
B11	Քաղաքագիտության հիմունքներ	Մ8 Մ16 Ը4
B35	Ռազմագիտության հիմունքներ	Մ8 Մ16 Ը4
B13	Տրամաբանության հիմունքներ	Մ8 Մ16 Ը4
B08	Բարոյագիտության հիմունքներ	Մ8 Մ16 Ը4
B12	Կրոնագիտության հիմունքներ	Մ8 Մ16 Ը4
B03	Մշակութաբանության հիմունքներ	Մ8 Մ16 Ը4
B26	Ազգագրության հիմունքներ	Մ8 Մ16 Ը4

B40	Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր	Մ8 Մ16 Ը4
B149	Մանկավարժություն1	Մ8 Ը2 Ը4 Ը5
B150	Մանկավարժություն 2	Մ8 Ը2 Ը4 Ը5
B152	Հոգեբանություն	Մ8 Ը2 Ը4 Ը5
B148	Ներառական կրթություն	Մ8 Ը2 Ը4 Ը5
B71	1-ին բուժօգնություն և երեխաների առողջության պահպանման հիմունքներ	Ը2 Ը4
B01	Ժամանակակից հայոց լեզվի հնչյունաբանություն	Մ1 Մ4 Մ5 Մ6 Մ9 Մ11 Մ12 Մ14
B02	Ժամանակակից հայոց լեզվի բառագիտություն	Մ1 Մ4 Մ5 Մ6 Մ9 Մ11 Մ12 Մ14 Ը4
B03	Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանություն 1	Մ1 Մ4 Մ5 Մ6 Մ9 Մ11 Մ12 Մ14 Մ16
B04	Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանություն 2	Մ1 Մ4 Մ5 Մ6 Մ9 Մ11 Մ12 Մ14 Ը4
B05	Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն 1	Մ1 Մ4 Մ5 Մ6 Մ9 Մ11 Մ12 Մ14 Մ16
B06	Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն 2	Մ1 Մ4 Մ5 Մ6 Մ9 Մ11 Մ12 Մ14 Ը4
B09	Խոսքի մշակույթի հիմունքներ և ոճաբանություն	Մ1 Մ3 Մ4 Մ5 Մ9 Մ12 Մ13 Մ14 Մ16 Ը5
B07	Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա	Մ8 Ը2 Ը4 Ը5
B08	Արևմտահայերեն	Մ1 Մ4 Մ6 Մ9 Մ12 Մ13 Մ14 Մ16
B10	Գրաբար 1	Մ1 Մ4 Մ6 Մ13 Մ14 Մ16 Ը4
B11	Գրաբար 2	Մ1 Մ4 Մ6 Մ13 Մ14 Մ16 Ը4
B12	Միջին հայերեն	Մ1 Մ4 Մ6 Մ13 Մ14 Մ16
B13	Հայոց լեզվի պատմություն	Մ4 Մ6 Մ13 Մ14 Մ16 Ը5
B16	Լեզվաբանության հիմունքներ 1	Մ1 Մ4 Մ8 Մ12 Մ13 Մ14 Մ16
B17	Լեզվաբանության հիմունքներ 2	Մ1 Մ4 Մ8 Մ12 Մ13 Մ14 Մ16 Ը4
B18	Ընդհանուր լեզվաբանություն	Մ1 Մ4 Մ8 Մ12 Մ13 Մ14 Մ16 Ը4
B24	Բնագրի լեզվաբանական վերլուծություն	Մ9 Մ11 Մ12 Մ13 Մ14 Մ16 Ը4
B14	Գործնական դասընթաց հայոց լեզվից	Մ9 Մ11 Մ13 Մ14 Մ16
B15	Բարբառագիտության հիմունքներ	Մ1 Մ6 Մ8 Մ13 Մ14
B02	Հայ հին և միջնադարյան գրականություն 1	Մ1 Մ2 Մ4 Մ5 Մ7 Մ10 Մ13 Ը3
B20	Հայ հին և միջնադարյան գրականություն 2	Մ1 Մ2 Մ4 Մ5 Մ7 Մ10 Մ13 Ը3
B01	Հայ ժողովրդական բանահյուսություն	Մ1 Մ2 Մ4 Մ5 Մ7 Մ10 Մ13 Ը3

B15	Գրականագիտության ներածություն	Մ1	Մ2	Մ4	Մ5	Մ7	Մ10	Մ12	Մ13	
B16	Գրականագիտության տեսություն	Մ1	Մ2	Մ4	Մ5	Մ7	Մ10	Մ12	Մ13	Ը3
B03	19-րդ դարի հայ գրականության պատմություն	Մ1	Մ2	Մ4	Մ5	Մ7	Մ10	Մ13		
B13	17-19-րդ դդ. արտ. գրակ. պատմ.	Մ1	Մ2	Մ4	Մ5	Մ7	Մ10	Մ13		
B05	19-րդ դ/վ 20 -րդ դ/սկզբի հայ գրական-ն պատմ-ն 1	Մ1	Մ2	Մ4	Մ5	Մ7	Մ10	Մ13		
B06	19-րդ դ/վ 20 -րդ դ/սկզբի հայ գրական-ն պատմ-ն 2	Մ1	Մ2	Մ4	Մ5	Մ7	Մ10	Մ13		
B10	Հայ գրաքննադատության պատմություն	Մ1	Մ2	Մ4	Մ5	Մ7	Մ10	Մ12	Մ14	
B12	Անտիկ և վերածննդի արտ. գրականություն	Մ1	Մ2	Մ4	Մ5	Մ7	Մ10	Մ14		
B11	Հայ գրականության դասավանդման մեթոդիկա	Մ8	Ը2	Ը4						
B14	19-20-րդ դդ. արտ. գրականության պատմություն	Մ1	Մ2	Մ4	Մ5	Մ7	Մ10	Մ14		
B17	Ռուս գրականության պատմություն	Մ1	Մ2	Մ4	Մ5	Մ7	Մ10	Մ14		
B23	Սփյուռքահայ գրականության պատմություն	Մ1	Մ2	Մ4	Մ5	Մ7	Մ10	Մ12	Մ14	
B07	Նորագույն շրջանի հայ գրականության պատմ. 1	Մ1	Մ2	Մ4	Մ5	Մ7	Մ10	Մ12	Մ14	
B08	Նորագույն շրջանի հայ գրականության պատմ. 2	Մ1	Մ2	Մ4	Մ5	Մ7	Մ10	Մ12	Մ14	
B09	Արդի հայ գրականության պատմություն	Մ1	Մ2	Մ4	Մ5	Մ7	Մ10	Մ12	Մ14	
B28	Բնագրի գրականագիտական վերլուծություն	Մ3	Մ13	Մ14	Ը4					
B21	Ձևաբանության արդիական հարցեր	Մ8	Մ12	Մ13	Մ14	Ը4				
B21	Քերականական տարարժեքությունը ժամ. հայ-ում	Մ12	Ը4							
B22	Կետադրություն	Մ5	Մ9	Մ12	Ը4					
B22	Դարձվածաբանություն	Մ3	Մ5	Մ9	Ը4					
B25	Ղարաբաղի բարբառ	Մ13	Մ14	Ը4						
B25	Հայոց տեղանվանագիտություն	Մ1	Մ13	Մ14	Ը4					
B21	Աստվածաշունչը և հայ գրականությունը	Մ1	Մ4	Մ5	Մ7	Մ10				
B21	Դիցաբանությունը հայ մատենագրության մեջ	Մ1	Մ4	Մ5	Մ7	Մ10				
B04	<< Հովհաննես Թումանյան >>	Մ4	Մ5	Մ7	Մ10	Ը4				
B04	Գր. Նարեկացին և հայ գրականությունը	Մ4	Մ5	Մ7	Մ10	Ը4				
B25	Օտարագիր հայ գրականություն	Մ4	Մ5	Մ7	Մ10	Մ12	Ը4			
B25	Հակոբ Օշական	Մ4	Մ5	Մ7	Մ10	Մ12	Ը4			
	Կուրսային աշխատանք-1	Մ8	Մ15	Ը3	Ը5					

	Կուրսային աշխատանք-2	Մ8	Մ15	Ը3	Ը5
	Բանահավաքչական փորձուսուցում	Մ8	Մ15	Ը3	Ը5
	Փորձուսուցում ուսումնական	Մ8	Ը2	Ը5	
	Փորձուսուցում մանկավարժական (կիրառական)	Ը2	Ը3	Ը4	Ը5
	Փորձուսուցում մանկավարժական (ամփոփիչ)	Ը2	Ը3	Ը4	Ը5
	Ամփոփիչ ատեստավորում				